ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Սոգիշոփի 1

№__3984-Ա___ « 17 » հոկտեմբերի 2024 թ.

ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԸ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՓՈԽԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 605-րդ հոդվածով և հիմք ընդունելով Երևան քաղաքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 26-ի «Երևան քաղաքի սեփականություն հանդիսացող գույքը օգտագործման տրամադրելու և օտարման 2024 թվականի ծրագրի վերաբերյալ» №50-Ն որոշման հավելվածի 6-րդ կետը.

1.Երևան համայնքի սեփականություն հանդիսացող, ընդհանուր՝ 441600 (չորս հարյուր քառասունմեկ հազար վեց հարյուր) ՀՀ դրամ արժեքով գույքը, ընտանիքի կենցաղային կարիքների համար օգտագործելու նպատակով, սեփականության իրավունքով անհատույց փոխանցել (նվիրաբերել) սոցիալական աջակցության կարիք ունեցող ընտանիքներին՝ համաձայն հավելվածի:

2.Լիազորել Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի ղեկավարին՝ Երևանի քաղաքապետի անունից, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով, սույն որոշման հավելվածում նշված անձանց հետ կնքել գույքի նվիրաբերության պայմանագրեր:

3.Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի ղեկավարի վրա:

4.Որոշման կատարման հսկողությունն իրականացնում է Երևանի քաղաքապետը:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ

Հավելված
Երևանի քաղաքապետի
17.10. 2024թ.
հ. 3984-Ա որոշման

Ց Ա Ն Կ
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔ ՈՒՆԵՑՈՂ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ
ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՓՈԽԱՆՑՎՈՂ ԳՈՒՅՔԻ

Հ/Հ	Շահառուի անուն, ազգանունը	Գույքի անվանումը	Քանակը	Մեկ միավորի արժեքը (ՀՀ դրամ)	Ընդամենը հաշվեկշռային արժեքը (ՀՀ դրամ)
1.	Աննա Ղարագյոզյան	լվացքի մեքենա	1	138000,00	138000,00
2.	Գրիգոր Գրիգորյան	լվացքի մեքենա	1	138000,00	138000,00
3.	Նարինե Ալեքսանյան	հեռուստացույց	1	165600,00	165600,00
		Ընդամենը	3 հատ	441600,00	441600,00

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ **ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ**